ՏԵՎԱԿԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Լրացավ ղարաբաղյան հակամարտության գոտում հաստատված զինադադարի կես տարին: Այսպես սկսեց այսօր իր բրիֆինգը ՀՀ նախագահի մամուլի քարտուղարի պաշտոնակատար Լ. Ջուրաբյանը: Սակայն դեռ վաղ է որեւէ կոնկրետ հաջողության մասին խոսք ասել: Այնուամենայնիվ շարունակվում են դիվանագիտական ակտիվ շփումները խնդրի կարգավորման վերաբերյալ: Նա մասնավորապես շեշտեց Մոսկվայում ընթացող բանակցությունները եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի նոր նախագահ, շվեդ դիվանագետ Ա. Բյուրների տարածաշրջան կատարած այցը, որը հիմնականում ուներ ճանաչողական բնույթ: Հուսադրող է Մինսկի խմբի նախագահի այն հայտարարությունը, թե բոլոր կողմերը պատրաստ են օժանդակել զինադադարի հետագա պահպանմանը:

Կարեւորելով ՀՀ նախագահի հրամանագիրը Գերագույն խորհրդում նոր տնտեսական ծրագրի քննարկումների վերաբերյալ, Լ. Ջուրաբյանը նշեց, որ մինչեւ այժմ արտաքին անկայունության, պատերազմական վիճակի եւ ապաշրջափակման պատճառով Հայաստանը հումանիտար օգնությունից զատ չէր ստանում միջազգային տնտեսական օժանդակություն եւ բարեփոխումները իրականացնում էր բացառապես ներքին միջոցների հաշվին: Սակայն այսօր արդեն սպառվել են այդ միջոցները բարեփոխումների ընթացքը շարունակելու համար: Ներկայումս հաստատված տեւական զինադադարը եւ կայուն խաղաղության հեռանկարները նախապայմաններ են ստեղծել հանրապետությունում միջազգային տնտեսական օգնությունների ներդրման համար, որ թույլ է տալիս իրականացնել որակապես նոր բարեփոխումների ծրագիր: Այդ ծրագիրը նպատակ ուներ ստեղծել մակրոտնտեսական հավասարակշռություն հանրապետության էկոնոմիկայում: «Շնորհիվ պլանավորված ներդրումների, կստեղծվի դրամի երաշխավորված կայունացում, գների միջեւ հարաբերությունները կմոտեցվեն համաշխարհային ցուցանիշներին, կանցնենք ոչ դեֆիցիտային բյուջեի»,– նշել է Լ. Ջուրաբյանը: Այդ ամենը ըստ նրա կստեղծի այն հիմքը, որի վրա կկառուցվի հանրապետության տնտեսության զարգացումը եւ վերելքը:

ՓԱՍՏ